

գայ գրաւման բնաւորութեան և կազմակերպութեան մասին: Մասնացոյց անելով Բ. Կրան գրաքննութեան անյարմարութիւնները վրա, Բրոյլ յիշեցնում է Մուշէի յայտնի խօսքերը. «Թէ Տունիսը գոյութիւն չունենար, պէտք էր նրան հնարել»: Նրա կարծիքով Բրոյլի դաշնագիրը կարող է վերաքննութեան ենթարկվել և պահանջում է, որ կառավարութիւնը պարզապէս քննութեան այնպիսի հարցեր չառաջարկէ, որոնք կառավարութեան արդէն վճռված են: Պատասխանելով Բրոյլին Գամբետտա գովից սենատը և մասնացոյց եղաւ, թէ այդ հիմնարկութիւնը որքան նշանակւոր է հանրապետութեան համար: Մինիստրների խորհրդի նախագահը խոստովանում է սենատի անհրաժեշտութիւնը և պնդում է, որ ինքը աշխատում է ամբողջով սենատի դրութիւնը: Այնուհետեւ Գամբետտա մերժեց իր կառավարութեան համբարաշխութիւնը նախկին մինիստրութեան հետ և խոստացաւ Տունիսի կառավարութեան մասին օրինագիծներ ներկայացնել, հէնց որ այդ երկրորդ խաղաղացած կը լինի: Գամբետտա ցանկանում է հետաքրքրված պետութիւնների հետ համաձայնութիւն կայացնել Տունիսի պարտքերի վերաբերութեամբ, ինչպէս որ այդ գործը կառավարած է եղիպտական Ֆինանսների վերաբերութեամբ: Ինչ կը վերաբերի հարցի զիպոմտական կողմին, Գամբետտա յոյս ունի, որ օտար պետութիւնները դժուարութիւններ չեն ծագեցնի: Վերջը Գամբետտա նկատեց, որ Ֆրանսիան Բրոյլի դաշնագրով կապված է մինչ այն ժամանակ, երբ նա միջոց կունենայ ազատվել բէյի վերաբերութեամբ ունեցած պարտաւորութիւններից առանց ոչնչացնելու դաշնագիրը, այլ ձգուելով Բրոյլի նրա կետերը, որովհետեւ, Գամբետտայի կարծիքով, Տունիսի վերակազմութիւնը չի խանգարի նրա անկախութեանը:

Սենատի նախագահ Լէօն Ա մի երկու ժողովարարներ անհապաճեցին անդամներին ընտրող հաւատարմատարների առաջ: Այն միջի այլոց մեկնեց իր յարաբերութիւնները այժմեան մինիստրութեան հետ, որի անդամ նա չը դարձաւ, որովհետեւ ինքն անհամաձայնութիւններ ունեցաւ Գամբետտայի հետ տնտեսական և ֆինանսական մի քանի հարցերի վերաբերութեամբ: Այս

նուհետեւ Լէօն Ա բացարձակ խօսեց սենատի վերանորոգման մասին: Նրա կարծիքով, սենատի համապատասխան վերանորոգութիւնը շատ օգտակար և միշտ անհրաժեշտ է: Նա կատարելապէս համաձայն է, որ այդ նպատակով սահմանադրութիւնը վերաքննվի: Լէօն Ա յիշատակեց հանգստացնող ապաւորութիւն է գործում, ցոյց տալով, որ սենատի բարեփոխումը պարտաւոր է ենթարկվել վերանորոգութեանը, որպէս զի անհամաձայնութիւն չը ծագի պատգամաւորների ժողովի և կառավարութեան մի կողմից և սենատի մէջ միւս կողմից:

ԻՏԱԼԻԱ

Իտալական պատգամաւորների ժողովը դեկտեմբերի 7-ին չափազանց բազմամարդ էր, որովհետեւ այդ օրը սպասվում էր մինիստր Մանչինիի բացատրութիւնը իշխան Բիսմարկի խաղաղութիւնը թշնամական նկատողութիւնների վերաբերութեամբ: Վեց ամիս սրանից առաջ, ասեց Մանչինի, իտալիայի դրութիւնը չափազանց դժուար էր: Միջերկրական ծովի վրա պատահած անցքերը փոստացրին իտալիայի և Ֆրանսիայի յարաբերութիւնները: Գերմանիայի և Աւստրո-Ունգարիայի կողմից սահմանութիւն էր նկատվում: Մեր դրութիւնը Բերլինի կօնգրէսի ժամանակ պահանջում էր բարեկամական յարաբերութիւններ ունենալ Գերմանիայի և Աւստրիայի հետ, որոնք խաղաղութեան զլխաւոր նեղուկն են կազմում: Հասարակական կարծիքը մեզ Վիեննա էր ուղարկում, որտեղից ծանապարհ էր բացվում գէպի Բերլին: Մի և նոյն ժամանակ մենք ի նկատի չունէինք որ և է դաշնակցութիւն: Երբեք իտալական և պաշտպանողական դաշնակցութիւնները մեր ժամանակի ոգուն հակառակ են: Բայց մեզ համար անհրաժեշտ էր բանակցութիւններ սկսել Վիեննայի մէջ, որպէս զի կարողանայինք նրանց շարունակել Բերլինի մէջ: Թագաւորի ծանապարհորդութիւնը Վիեննա քաղաքական նպատակ ունէր: Վիեննայի մէջ ոչ մի անկախութիւն չարկեցաւ, որ մեր ինքնասիրութեան դէմ լինէր: Այնուհետեւ կատարելապէս հաւատում էին, որ մենք պէտք է հաւատարիմ մնանք դաշնագրին: Վիեննա

նայի ազգաբնակչութիւնը ոգեւորութեամբ ողջունում էր թագաւորին և թագուհուն: Այդ ծանապարհորդութիւնը ոչ մի երկրի համար թշնամական նպատակ չունէր: Գերմանիան հաւանեց այդ քայլը և մեր յարաբերութիւնները գերմանական կառավարութեան հետ բարեկամական դարձան: Զօկտեմբերի 24-ին Բերլինից մենք մի թուղթ ստացանք, որտեղ ուրախութեամբ յիշվում էր իտալական թագաւորի այցելութիւնը Վիեննային: Ինչ կը վերաբերի իշխան Բիսմարկի խաղաղութեան մէջ արտասանած խօսքերին խաղաղութեան մասին, նրանք ծարտասանական անհրաժեշտութիւն են կազմում Գերմանիայի ներքին գործերի վերաբերութեամբ: Ես աւելորդ եմ համարում նրանց մասին երկարօրէն խօսել: Այս քանը միայն կասեմ, որ այդ խօսքերը բոլորովին չեն փնտրում իտալիայի և Գերմանիայի բարեկամական յարաբերութիւններին: Ես աւելորդ եմ համարում հաւատացնել, որ մեր միապետութիւնը կատարելապէս ամուր է: Այդ կողմից ամենալաւ դատարարը կարող է իտալական պարլամենտը լինել: Մեր թագաւորող տան գոյութիւնը անխզելի կապերով կապված է իտալական սահմանադրութեան հետ: Մեր հարաւային երեւակայութիւնը չափազանց մեծ նշանակութիւն տուեց իշխան Բիսմարկի խօսքերին: Շատ հաւանական է, որ նրա երկիւղը իտալիայի ներքին քաղաքականութեան համար մեկնվում են հոգեւորով մեր միապետութեան համար: Բայց մենք կարող ենք ծնել այն ցոյցերը, որոնք սպասում են խանգարել արտաքին խաղաղութիւնը: Այնուհետեւ մինիստրը հաղորդեց, որ մի մասնաժողով է նշանակված յանուարին յանձնելու մասին մի օրինագիծ կազմելու համար: Մինչեւտի կարճ պատասխանից յետոյ Մանչինի ասեց, որ իտալիան հետեւում է խաղաղասէր քաղաքականութեանը: Այնուհետեւ առաջին մինիստր Գեպրեստի խոստացաւ հաշիւ տալ իտալիայի ներքին քաղաքականութեան մասին այն ժամանակ, երբ կը քննվի ներքին գործերի մինիստրութեան բիւզժետտը: Մանչինիի ծառը սահմանութեամբ ընդունվեցաւ: Երբ նա ասեց, թէ ինքը հաւատարմութեամբ է վերաբերվում Գամբետտայի կառավարութեանը, դահլիճի մէջ ծիծաղ բարձրացաւ և պատգամաւորներից շատերը

բողոքեցին: Արմատական պատգամաւոր Կոմ Գերարդի նկատեց, որ իտալիայի մէջ յետագիւնութեան է կատարվում արտաքին միջամտութեան շնորհիւ: Բիսմարկ չէ խնայում ամբողջ ազատամիտ եւրոպային: Իտալական արմատականները դաւադիրներ չեն: Նրանք հետեւում են պատմական դարգացմանը:

ԳԵՐՄԱՆԻԱ

Գերմանիայի 10-ին գերմանական լայնատաքի մէջ քննվում էր սոցիալիստների դէմ օրէնքի գործադրութեան մասին հաշիւը: Պատգամաւոր Հագենկելվեր ցաւակցութիւն յայտնեց, որ այդ օրէնքի հիման վրա պատժվում են բոլորովին անմեղ մարդիկ: Այդ օրէնքի օգնութեամբ կառավարութիւնը կարողացաւ հեռացնել սոցիալական կուսակցութեան անյուսույի տարրերը, թողնելով նրան թարմ ոյժեր: Վերջին բնորոշութիւնները ապացուցին, որ սոցիալական կուսակցութիւնը ոչ թէ թուլացաւ, այլ աւելի մեծ ոյժ ստացաւ: Սոցիալ-դեմոկրատներին մերժում են աշխատանքը նրանց քաղաքական համոզմունքների պատճառով: Կառավարութիւնը իր կապիտալներին արգելում է սոցիալիստներին աշխատանք տալ, արգելում է ստորագրութիւններ յօդուտ այն բաների ընտանիքների, որոնք զրկված են աշխատանքից: Թագաւորը առեսահպատակ հրէաների փող են հաւաքում, գերմանացիներին վերաբերելով պատճառով Բոհեմիայի մէջ մեծ բարկութիւն տիրեց, մինչդեռ սոցիալիստ բանուրներին չեն խնայում նոյն իսկ ազատամիտները: Այդ ժամանակ պատգամաւոր Լենկ բացականչեց. «Ինչպիսի անամօթութիւն և նախագահից կարգի հրաւիրեցաւ: Այնուհետեւ Հագենկելվեր ձգտում էր պացուցանել, որ սոցիալիստների դէմ օրէնքը նպատակին չէ հասնում և որ «Freiheit» և «Social-demokrat» լրագիրները այդ օրէնքի հետեւանքներ էին: Նոյնպէս սոցիալ էր պաշարված դրութեան յայտնելը Համբուրգի, Ալտոնի և Հարբուրգի մէջ: Լայպցիգի մասնաժողովի հաշիւը ծիղր չէ սոցիալական կուսակցութիւնը մշտական կազմակերպութիւն չունի: Սոցիալիստները ծանաչում են գործող օրէնքները, բայց նրանք միշտ կաշխատեն բացառական օ

կան հիւր, որ ինքզին էր իրան չը խանգարէ: Ծանապարհորդական փոքրիկ ծաղովի լապտերը լուսաւորում էր վրանի ներքո: Նա փաթաթված էր իր հաստ վերաբերվել մէջ, որ ծառայում էր նրան և՛ որպէս օճոց, և՛ որպէս վերմակ: Չուրը ծնունդը դրած, թէք էր ընկած թանձր թաղիքի վրա, որ տարածված էր ճախնային ցամաք բոյսերի վրա: Մի քանի պահպաններ չըջապատել էին նրա վրանը, և հեռու նստած, ծխում էին: Իսկ թիկնապահները քնած էին առանձին վրանում, մի քանի քայլ հեռաւորութեան վրա: ալտուղ ճրագ չէր վառվում:

Կոշտ, խոտաւորտ գլինուրը այս գիշեր դարձել էր փափկաւորտ, զգայուն, երակալոր: Նրա յիշողութեան մէջ, մինը միւսից յետոյ, զարթնում էին այն օրվայ տխուր տպաւորութիւնները և լցնում էին նրա սիրտը ցաւալի զգացմունքներով: Զաղթութեան աջողութիւնը չէր ուրախացնում նրան. նա յաղթութիւններ չէր արած: Նրան տխրեցնում էր իր հայրենիքի խորտակված փառքը և ներկայ թշուառութիւնը:

Մինչև Զեփու բերդը հասնելը, նա իր զօրքով անցել էր Հալիճորի միջով, որտեղից հոսում է նոյն անուշով գետը: Այդ խուլ անդնդաւոր ձորը կարելի է նմանեցնել մի երկայն, անվերջաւայի, նեղ փողոցի, որի աջ և ձախ կողմերից, հակադաս բարձրութեամբ, կանգնած են պատի պէս ուղղաձիգ, անտառապատ լեռներ: Այդ վիթխարի լեռների վրա նայելիս, մարդ կարծում է,

թէ ծառերը բուսել են ամպերի վրա: Այդ նեղ փողոցը, այդ միջին ձորը, այն անցքն է, որ տանում է դէպի Սիւնեաց աշխարհի ներքո: Կա Սիւնեաց մեծ տան ահագին դաշնան (կօրկօրն) է: Մեր նախնիքը նրան կոչում էին Կապան \*) և այդ անուշով կոչվում էր ամբողջ անտառապատ գաւառը, ուր բնակվում էին հայ մարդիկ, որ շատ չէին զանազանվում իրանց ծնակներում բնակվող վաղնիկներից:

Կապան, այդ փոխաբերական բառի մէջ ամփոփվում է նրա սարսափելի նշանակութիւնը: Կապան, նշանակում է՝ կապված, փակված անցք: Կապան, դա անդնդաւոր խոխոմների մի ցանց է, դա մի հրէշաւոր ծուղակ է, որի մէջ Սիւնեաց աշխարհի իշխանները կաշկանդում էին թշնամու լեզւունները:

Բայց ինչ էին այդ ահարկու ձորի փականքները, նրա կապանները: Այդ բոլորը այնօր տեսաւ Կալիթ-բէկը և այժմ նրանց վրա էր մտածում:

Նա տեսաւ Հալիճորի բերդը, իսկ նրա հանդէպ՝ Աչաղու բերդը: \*) Այդ երկու բերդերը, որպէս երկու վիթխարի պահպներ, կանգնած նեղ ձորի աջ և ձախ կողմերում, լեռների բարձրութիւնից մահ էին սպասում յանդուգն թշնամու, ինչ կը համարվակցէր այնտեղից անցնել: Բայց այդ երկու բերդերի սոսկալի աւերակներն էին

միայն մնացել: Զանազան Վատախներ, Սահալը, Բաղկէնը, հսկայ Գրիհնը, Գրիգոր քաջացի նուիրակ՝ Կոչվաճը, որոնք մի ժամանակ նրանց միջից կրակ էին թափում պարսիկների, մոգօլների, արաբների վրա, Բաղաց թագաւորութեան այդ հերոսները այժմ չը կային...

Յիշեալ երկու բերդերի միջով անցնելով, նա մտաւ Բաղարիւր քաղաքի աւերակների մէջ: Կա Բաղաց թագաւորների մայրաքաղաքն էր: Բնութիւնը հազիւ երբէք հրաշակերտել է մի այսպիսի ամրութիւն մարդկանց ապահովութեան համար: Այդ ահուկ քաղաքը նմանում էր մի վիթխարի քարեղէն մոլորակի, որի մէջ կողքերի փոխարէն ծառայում են ահագին պարսպաձեւ լեռները: Բայց ինչ էր մնացել այնտեղ: Թագաւորների, իշխանների խորտակված պալատները, հոյակապ եկեղեցիները, ամրոցների կիսաւեր աշտարակները, բոլորը, ինչ որ յիշեցնում էր հին փառքը և մեծութիւնը, Ծածկված էին խուլ, միջին անտառի տակ: Տաճարների միջից բուսել էին ահագին կաղնիներ, վեհապետների սրբոցների փշրանքները, խառնվելով քարալիւծների կուրծքից պոկված, ցած զլորված ժայռերի հետ, ներկայացնում էին մի սարսափելի զանգուած:

Քարեղէն մոլորակ, որի մէջ անտառալի կերպով պահվում էր Բաղալի հուշակաւոր քաղաքը, այժմ ներկայացնում էր մի տխուր, քարեղէն դադար, որի մէջ վաղուց արդէն թաղված էր Սիւնեաց աշխարհի մոռած մայրաքաղաքը...

Կալիթ-բէկին հիպնոսում էր հին հայերի պատերազմական և՛ ազգագրական հանճարը: Նա զարմանում էր, տեսնելով թէ որ աստիճան նրանք օգուտ քաղել գիտէին իրանց աշխարհի բնական ամրութիւններից: Ուր որ բնութիւնը մի բան թերի էր թողել, նրանք լրացնում էին արհեստական ամրութիւններով: Բայց ինչ էր պատճառը, որ նոյն իսկ ամրութիւնները նրանց գերեզման դարձան: Ահա այդ հանելուկի վրա էր մտածում նա:

Բաղարիւրը \*) խորապէս դրած էր մի քարեղէն մոլորակի մէջ, ահագին լեռներից և ապառաժներից կազմված մոլորակի մէջ: Երկու ծայրերից երկու նեղ փանալներ միայն կարող էին տանել դէպի մոլորակի ներքո, այսինքն դէպի քաղաքը: Այդ նեղ փապարներից մէկը, ինչպէս տեսանք, ամրացրած էր երկու բերդերով: Աշտարակները միմեկին հանդէպ, լեռնային բարձրաւանդակների վրա: Քաղաքի միւս ծայրի անցքը նոյնպէս ամրացրած էր երկու բերդերով: միւր կողմում էր Բաղալիւր—քաղ, միւրը Շլորուտ: Այդ երկու բերդերը նոյնպէս կանգնած էին միմեկին միմեկին դէպ, միջտեղից թողնելով նեղ փապարը, որտեղից միայն կարելի էր մտնել քաղաքը: Այստեղ էր

\*) Այժմ կոչվում է Ղափան:

\*) Այդ բերդը այժմ կոչվում է Ղըր-Ղալալ:

\*) Բաղարիւրը հիմնել է Բաղալի իշխանը, որը Սիւնեացի տոհմիցն էր:

ընկերները առաջն առնել, ինչպէս այդ առում էին կղերականները կաթօլիկ եկեղեցու դէմ ուղղված օրէնքի հետ: Արդեւ նա խօսեց կառավարութեան սօցիալ-քաղաքական նախագիծերի վերաբերութեամբ և աւելացրեց, որ նրանց անկարելի է քննադատել, քանի որ գոյութիւն ունեն բացառական օրէնքները: Ներքին գործերի մինիստր Պոլտովսկի, պատասխանելով այդ ճառին, ասաց, որ քաղաքականութիւնը համեմատաբար մեծ չէ: Սօցիալ-դեմոկրատները ունեն երկու բաժիններ՝ չափաւոր և յեղափոխական, բայց առաջին բաժինը պետութեան համար նոյնքան վտանգաւոր է, որքան և երկրորդը: Նրանց մէջ զանազանութիւնը ձեռք է կայանում: Կառավարութիւնը սրտանց ցանկանում է դադարեցնել սօցիալիստների դէմ օրէնքի գործադրութիւնը: Բանւորները կարող են այդ բանին նպաստել, եթէ չը բարեկամանան վտանգաւոր ցոյցեր անող անձանց հետ: Բայց քանի որ կան սօցիալ-դեմոկրատական ձգտումներ, այդ օրէնքի գործադրութիւնը անկարելի է դադարեցնել: Սակայն նախկին մինիստր Նոսովը-Վոլոյից պաշտպանում էր իր կառավարութիւնը Հագինկի վերի յարձակմունքներից և մասնացոյց եղաւ այն իրողութեան վրա, որ սօցիալիստ բերել իր նշանաբան է դրել՝ հանրապետութիւն քաղաքականութեան մէջ, սօցիալիզմ քաղաքական տնտեսութեան մէջ և անաստեղծութիւն կրօնի մէջ: Կոստյուրովսկի պէտք է բոլոր միջոցներ գործադրէ այդպիսի նախագիծի առաջն առնելու համար: Առաջագիծ չենել նկատեց, որ նրա կուսակցութիւնը չի քննադատի այդ օրէնքը: Նա կամենում է միայն նկատել, որ օրէնքի գործադրութիւնը կառավարութեան ձեռքով չէ կատարվում, այլ անցնում է երկրորդական պաշտօնական անձանց ձեռքը, որոնց վրա հսկողութիւն չը կայ: Լասկեր ասաց, որ սօցիալիստների դէմ օրէնքը դեղձված է նրանց բնորոշական իրաւունքների սահմանափակումով: Ամենքը խորհուրդ էին տալիս սօցիալիստներին ընտրութեան ազատութիւն տալ, թոյլ տալ ժողովներ կայացնել և ազգաբարութիւնները հրատարակել, բայց կառավարութիւնը չը հետեւեց այդ խորհուրդներին: Սօցիալիստների դէմ օրէնքը գործնական հետևանքներ չունեցաւ: Նրանց թիւը

ընդհատագի մէջ աւելացաւ: Եթէ կառավարութիւնը մտադիր չէ յարգել ընտրութիւնների ազատութիւնը, Լասկեր ստիպված կը լինի քուէարկել քննիչ օրէնքի դէմ:

ՆԱՄԱԿ ԹԻԻՐՔԻԱՅԻՑ

Կ. Պոլսի, 25 նոյեմբերի

Պատրիարքի տուած հրաժարականի մասին դրած նամակի մէջ եւ ձեռք առնել, որ Սայիդ փաշային իրան տուած այդ հրաժարականը Կ. Պոլսի հայ հասարակութեան մտքերը սաստկապէս պիտի յուզէ և քուէ շարժում յառաջ ընդէ: Գրեթէ այդպէս էլ դուրս եկաւ. գաւառացի հայ ժողովուրդը, որը առ քիչը յիսուն հազար մշակ մարդիկներէ կազմուած, տնտեսելով, որ իրան սիրած պատրիարքը զոհ է դնում մի քանի կաշառված դաւաճաններին, որոնց անունները արդէն ձեռք լաւ յայտնի են, ամեն կողմից հաւանք լոգոնումով, որ զորք են անում մանաւանդ Կիարքիքի վիլայեթի հայերը միմանց մէջ քիչորերի արշաւանաց դէմ ընդդիմադրական խմբեր ժողովելու համար, հաղարկելով թափում են պատրիարքարանի շուրջը իրանց պաշտելի պատրիարքին զուրկները և ձեռքերը զոհ նուիրելու համար: Հարցը մեծանում է. երեք օրվայ մէջ տասնութ հինգ հազարից աւելի ստորագրութիւն է հաւաքվում կառավարութեան տալու համար, որ Կ. Պոլսի մէջ ապրող գաւառացի հայերը լսել անգամ չեն ուզում Ներսէսի հրաժարականի հարցը: Այս խլրտումը սաստկապէս ցնցում է դեպքանքին և նոյն իրան թիւրք կառավարութեան: Երբ Կիարքիքի, պ. Նովիկով, Բուրկ և այլն միմանց կտնկի տեսակցութեան են շտապում Ներսէսի սեփական ընկալարանը յորդորելու և համոզելու, որ յետ կանգնէ հրաժարվելու մտքից, որը մայրաքաղաքի բրիտանական ընկալութեան մէջ այնչափ անյարմար շարժումներ է պատճառում: Գլխիս է պատրիարքի մօտ վերջապէս ձեռքից-փաշային, որը արգելութեան միջոցով է յայտնում է, որ հրամայված է իր կառավարութեան կողմից համոզել պատրիարքին յետ առնել իր հրաժարականը, որովհետեւ նախընթաց օրուայ մէջ կայացած միմիստական ժողովը միահամուռ որոշել է չընդունել նորա հրաժարականը: Պատրիարքը չէ՛ր է ասում կանգնում, պնդելով թէ միայն այն ժամանակ յետ կառնէ հրաժարականը, երբ թիւրքերի կառավարութիւնը անմիջապէս կը կատարէ այն ինչ որ առաջադրած բաները, որոնցով պատճառարանել էր իր հրաժարականը Սայիդ փաշային տալու ժամանակ: Յիշեալ ինքը կէտերը հետեւելի մէջ էին կայանում: 1. Ամբողջական արձակել Կ. Պոլսից Հայաստան դառնալու համար այն քաղաքիկ առաջնորդները, վարդապետները և քահանաները, որոնք պահվում են Կ. Պոլսի մէջ իր պատճառի թիւրքերի դէմ: 2. Կիւրդիայի կաթողիկոսութիւնը միանգամ ընդ միշտ ստիճանի իրադէտով Կ. Պոլսի պատրիարքութեան իրաւաստանի խոստացւել ենթարկել: 3. Վերցնել այն նոր օրէնքը, որը դրած է յատկապէս հայերի համար, այն է, նկատել իր պատճառի իրաւաստանը հային, որը որ է և պաշտօնական իրան Հայաստանի ինքնավարական կազմակերպութեան կուսակցից ցոյց կը տալ: 4. Տնայել այն խիստ ցնցողական ճնշումները, որոնք ենթարկված է մի քանի ժամանակից ի վեր հայ կաթողիկոսութիւնը և հայ գրքերի տպագրութիւնը: 5. Բնաւ չը խառնել այն ուսումնասիրական պրոբլեմի և անօրինութեանց մէջ, որոնցով դատարարական են Հայաստանի մասնակցները: 6. Կրկին հայթայթել տեղութեան հաշուով Կ. Պոլսի հայոց ազգային հրահանգի միւր և մի քանի ուրիշ միջոց, որ տարեկան մօտ 30

հազար լուրը են պահանջում: 7. Նոյն օգնութիւնը մատուցանել Կ. Պոլսի և այլ բարեգործական ազգային հաստատութիւններին, ինչպէս օրինակ մայրապետ Գալֆայեանի որոնողին և այլն: 8. Հայաստանի մէջ մտցնելի բեֆօրմների համար տալ հայոց ազգին երազական կարիքները ձեռքով ան միջակայն իրագործման շուրջ փութելը: 9. Մինչ և բեֆօրմները կատարուել են և մոտ ժամանակահատիւը Հայաստանի մէջ ժամանակահատիւը միջակայնի հսկողական կ'օժիտուի: Անս այս ինքը պահանջներն են, որոնք կարգադրել են միմիստական ժողովի մէջ և երկար վիճարկութիւններից յետ յառաջ ընդին այն առ ժամանակեայ որոշումը, որ ձեռքից փաշային գլխապատրիարքի մօտ անելու, որ միմիստական ժողովը իրան իրաւունքի մէջ համաբնով պատրիարքի առաջադրած 6 և 7 կէտերի ընդունելը, անմիջապէս հրամայեց տեղութեան հաշուով հայթայթել Կ. Պոլսի հայոց բոլոր բարեգործական հիմնարկութիւնների ուսուցիչներ, իսկ ինչ կը վերաբերվի մնացեալ աւելի ծանրակշիւ կէտերին, այդ մասին միմիստական ժողովը զեկուցում էր տալ սուլթանին, վանսուրը մինչև սուլթանի հրամանը դուրս գալը հարկաւոր է, որ պատրիարքը չը հրաժարվի իր պաշտօնից: Այսպիսով տեսնում էք, որ արիստոստ և համարելի դատաւոր հայերի շարժումները այնչափ կարեւորութիւն և ցնցում տուին հայոց պատրիարքի հրաժարականին, որ հայոց հազար զարձակ եղաւ օրուայ ամենամեծ խնդրի, որի լուծելու մասին որչափ էլ արտաքին ճնշողութիւններ լինէին, բայց դարձեալ գլխաւոր դարձել պիտի լինէր ի ներքուստ... Հիմա անկողը չէր լինի եթէ մի առանձին ուշադրութիւն դարձնէք այն իրողութեան վրա, որով մի կողմից Կ. Պոլսի ազգային ժողովի մէջ յանուն «ազգի», «ազապաշտ», «անցեալի» էլ չը գլխում ինչ մեծ մեծ բաների պտուղներուց հարգաքանները այնչափ վատ են և զգուշիւ, որ այսպիսի մեծ ճնշմամբ մէջ ազգը ծախում են մի քանի զրուշով տեղութեան, իսկ միւս կողմից այդ «պարագայ» վատ մտղաներից արտաբարձ, միւս ծաղրած Հայաստանի «կոպիտ խմբուները» միւս շախմատի և բեռնակիրները, տեսնելով հայրենեայ հարցը վտանգի մէջ, մոռանում են իրանց օրվայ ապրուստի տարկողական խնդիրը և նուիրում իրանց զուրկները և ձեռքերը պատրիարքին ի գոհ: Չէ՛մ ասած արդեօք քանիցս թէ հայ ազգի միջին և ստորակարգ դասը աչքալու և պատուի նշանակ հատկութիւն է, ազնիւ և հայրենասէր, որչափ վատ են, նաեւ «մեծ ազգասէր» անուններ վայելող մեր այժմեայ կրեւորները... Այ թիւ ուրախութեան արժանի է և այն ուրախելի երեւոյթը, որով այս մեծ ազգային շարժումների զլխաւոր պարագլուխները գրեթէ հայ կաթողիկ և հայ բողոքականներն են: Գոյանելի մէկին, որը Սերաստիայի վիլայեթի Փրինկը զեկուցելի մի հայ կաթողիկ կոպիտ բեռնակիր էր, երբ հարցրի թէ իրան ինչ գործ պատրիարքական հրաժարականին: «Ինչ» բացատրեց զարմանալով հրէ (հարց) Ներսէս պատրիարքը չըլլայ մեր խաչատուրու իլլաճը (ճար) Էնդըր (ինչպէս) կըլլայ:—«Չէ՛ք, որ Հայաստան, որ Արամուրդի չէ՛ք շարունակելի փորձելով:—«Վնասող մատուցել էլ չենք ծանոթ, հիմա իրական Արամուրդ խաչատուր է, էլ էն Վանէն, Կրքուրմի ինչպէս (մինչև) Զէյթուն և Վարաշ»: Տեսաւ որ պատրիարքի մի քանի քաղաքական հարցերի մէջ: Նոյն միմիստական գրգայան տալիս արտապաշտութիւնը և ապաքցելը միմէ չէ՛ն տալիս քանի տարի ի վեր և Կովկասի

հայ կաթողիկները (մանաւանդ Ախալցխայի զաղթականները) և հայ բողոքականները: միմէ որ և է ազգային հանգանակութիւնից և շարժումից յետ են մնում մեր շախմատի բողոքական եղբայրները, որոնք թէպէտ աղքատացած և նիւթական նեղ տագնապի մէջ, սակայն սովի ժամանակ, նոյն իսկ այժմ «Journal d'Orient»-ին կամ ազգային գործին օգնութիւն հասցնելու մէջ միշտ հաւատարմաբար արձագանք են տալիս: Անս ինչ կը նշանակէ ազգային հարցը նեղ և մոլեռանդ կրօնական հողի վրա: Այսպէս են վերաբերվել արդեօք «ազգային շահերի» անունով խօսող ձեռ յայտնի հայ լրագիրները, որոնք ամբողջ քառորդ դար այդ «ազգային շահերի» սակ իրանց անձի և գրպանի շահերն էին փնտրում, նայելով, ի հարկէ, թէ որ կողմից աներկոյթ ձեռքերը կը գցեն առաւ ժամոյց իրանց «ազգասիրական» և լակրունքական» գրպանը: Եւ այդպիսի փնտաղար և զգուշիւ կենդանիներն էլ դեռ երես ունեն ամօթը և պատիւ վերջին նշույլը կողքած յաթխա մեղերուն հոգին հոգնել և պատուելութիւններ անել հասարակութեան մէջ, բայց թողնել խորթաւ փարիսեցիների պատմութիւնը... Վաւերական աղբիւրից լսվում է, որ այս օրերս Սայիդ փաշայի միմիստութիւնը պիտի ընկնէ, ասովի նախարարը կը լինի, ասում են, Արիֆի փաշան, որը պատրիարքի լաւ բարեկամներին է և ինքը բնաւ մոլեռանդ թիւրք չէ: Սայիդը ընկնել պիտի վերագրած գլխաւորապէս ի հարկէ դեպքական ճնշումներին, բայց կան, ասում են, նոյնպէս և ներքին ինտրիգներ, որոնց ծաղր ի հարկէ զանազան կանանդապետ աղաների ձեռքին է: Ճշմարտութիւնը ամենից վեր. թէպէտ Մասիսի թղթակից պ. Շառնաբարձը երբեմն տուրուութիւն ունէ չափ թոյլ բաներ գրելու ուսանալիցի տաճարային, բայց այս անգամ ուսանալ հարուստների մասին նորա գրած նամակը գրովին չափ պատիւ կարող է բերել: Այդ նամակը, որի մէջ այնչափ ազատ լեզու և անորոշ ճշմարտութիւններ յախանէ խնամանք յայտնված էին, չափ հանձնի տպագրութիւն արեւց այստեղ, չափ օրուայ են այդպիսի ազատ գրութիւններ մանաւանդ հիմա, երբ շատերն հարկաւոր է խաւարից լոյս աշխարհ հանել... Գրիգոր Նիկողոսեան

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՒՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 9 դեկտեմբերի: Լենայի բերանի մօտ գտնված է 1877 թուականի Ամերիկական բեւեռային արշաւանքի «ժանետ» շոգնաւոր ծանապարհորդների մի մասը: Այսօր «Правит. Вѣстн.» լրագիրը հայտնում է, Կարգադրված է ամենաբեռնաւոր միջոցներ գործադրել Լենայի բերանի մօտ սառուցի մէջ մնացած մարդկերանց գանելու համար: Լրագրիները դեկտեմբերի 9-ից հաղորդում են, որ երեւոյթված է մոյնել նոր թռչուններ ծաղի համար գինուորական բժշկիկներին հետեւել կարգով: 1882 թուականին Կովկասի, Տուրկեստանի և Սիբիրի շրջաններում, 1883 թուականին Կիւրդի, Վիլնի, Վարշավայի և Օդեսայի շրջաններում, 1884 թուականին Ս. Պետերբուրգի, Մոսկույի, Խարկովի և Կազանի շրջաններում:

Խմբագիր—հրատարակող Գ.ԲԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ

իսկական Կապանը, —այն վիթխարի փականքը, որ արգելում էր թշնամու մուտքը \*)): Բաղաւայ-քան, խիստ հեշտ արտասանելի բառեր են: Բայց նա ընտրեան հրէշաւոր ստեղծագործութիւններից մէկն է:—մի ամենի, սեպագած, միապաղաղ քար ձորի խորքից վեր է բարձրացել դէպի երկինքը, և իր հպարտ գլխի վրա, որպէս մի գեղեցիկ պսակ, դրել է Բաղայ իշխանի առեւի լամբը, դարդաբաժ բարձր աշտարակներով և անդակուելի պարիսպներով: Այստեղ սարապիւնի Անդոլ իշխանը, Բաղայի տոհմի հսկայ ներկայացուցիչներից մէկը, բերեց պարսից Շապուր Թագաւորի դանձերը: Այստեղ նա վայելում էր հիշման հարուստ աւարը, երբ յայթայթեան վերադարձաւ սասանեանների աշխարհից: Այդ ստակալի բերդի ապաւաններին զարկելով, փշրվեցան պարսից ահալին գունդերը: Բայց ինչ էր տեսնում այնտեղ այժմ Գաւիթ-բէկը: Բաղաւայ-քանի բարձր աշտարակները և հրգոր պարիսպները դեռ մնացել էին: Գարեբով պատերազմելով ժամանակի և թշնամու բարբարոս ձեռքերի հետ, այդ ամբողջութիւնները դեռ պահպանել էին իրանց վաղեմի վեհութիւնը: Բայց նրանց բերանից լսում էր բէկը մի խուլ բողոք, մի դառն նախադիմել դէպի հսկայ նախորդների

թղուկ յաջորդները: «Մենք, ասում էին այդ աւերակները, շատ անգամ պահելիք ձեզ, շատ անգամ պահպանելիք թշնամու հարուստներից, իսկ դուք այնքան թոյլ գանդեցաք, որ մեզ պահել չը կարողացաք...» Դաւանդները իրաւացի էր: Կապանի եօթն բերդերից, որոնք եօթն կողմերից նրան դրած էին զանազան անդրերի վրա, չէն վնասել էր մէկը միայն Գիւրկայ բերդը կամ Զէլուճ, այն ևս մի թուրքի ձեռքում: Այդ բերդն էր, որ պաշարել էր Գաւիթ-բէկը: Այդ տխուր մտածութիւնների մէջ էր բէկը, երբ բարձրաճառակ մարդը, բանակների մէջ չըլլելուց յետոյ, մտաւ նրա վրանը: —Եւ ձեզ սպասում էի, որբաղան, ասաց բէկը իր տեղից շարժվելով և նրան տեղ տալով:—Նրա տեղէն: Սրբազան տեղաւորվեցաւ նրա մօտ, բայց չը կարողացաւ զգուշ իր հետաքրքրութիւնը, երբ նրա կատեց բէկի գոնաթափ դէմքը: —Գուր, երեւի, պաշարման ընթացքի վրա էլք մտածում, ասաց նրան:—գործերը, փառք Աստուծոյ, յաջող են գնում: —Ոչ, եւ ամենին այդ մասին չէի մտածում... պատասխանեց բէկը յայտնի տհաճութեամբ:—միայն ինձ փոքր ինչ ձանձրացնում է մեր արշաւանքի կանգ առնելը: \*) Կապանը, կամ Գաւիթը կոչվում է եօթնաբերդեան հէնց այդ եօթն բերդերի պատճառով:

—Որհնած, ասաց սրբազանը իր ուրախ ծիծաղով:—Գիւրկայ բերդը այն ամբողջութիւն է, որ ամենից իր շուրջը պահել է սուղ պաշարոյններին, մեծ բան չէ, որ մի երկու օր էլ մեզ սպասել տայ:—Առաւօտեան նա իր դռները կը բացան, մեր առջև: —Ի՛նչ գիտէք: —Գիտեմ: Ինչպէս երեւում է, տէր Աւետիք, խորէն սրբազանը, Ստեփանոս իշխանը և Բալի գործակալը հասել են իրանց նպատակին: Եւ այս րոպէիս նրանցից մի փոքրիկ տոմսակ տաացաւ և շտապեցի ձեզ մօտ: —Տեսնեմ: Սրբազանը սուղ բէկին մի հատ ընկալ: Բէկը իսկույն հատկացաւ խորամանկութիւնը, և ժպտելով ասաց: —Վատ չէն հնարել: տոմսակը ծրարել ընկալի կեղծի մէջ: Երեւի, այդ ընկալի միջոցի տեղ են կը գտնեմ տոմսակը: Եւ հա՛ւա տուեց ընկալը, կեղծը երկու մաս լաճանվեցաւ և միջից ցած ընկաւ մի թղթի կըտոր: Նրա վրա մանր, նոսր գրով կարդացվում էր հետեւեալ տողերը: «Գործերը յաջող են գնում: Շուտով բերդի դռնարանը մեր ձեռքում կը լինի: Նրանով կը դռնարանները տեղացի հայերին խնդի ամբողջ բաղանիները նոխալէս մեր ձեռքում են, մեր նրան ողջ կը բռնենք: Բերդի արեւմտեան պարսպի տակ կից փորված է մի ական, գրաբերու ծանօթ է

տեղը, այստեղից կարող էք համարձակ մուտք գործել: Նրը կը նկատէք մի ֆշանք, բերդից բարձրացած օդի մէջ:—Դա յարձակման ճիշտ նշանն է: Ստորագրված էր՝ տէր Աւետիք: —Ո՛վ բերդից այդ թուղթը, հայրենից բէկը, երբ վերջացրեց կարգաւոր: —Տեղացի երիտասարդներից մէկը, պատասխանեց սրբազանը:—Որը դուրս էր եկած նոյն ականի միջով, արի մասին խօսվում է տոմսակի մէջ: —Գուր նրան մի լանով վարձարեցիք: —Ոչինչ չը պահանջեց: —Իսկ մերձք պատրաստ են: —Եւ սպասում էի, թէ ինչ հրահանգ կը տաք դուք, դա համար ոչինչ չը յայտնեցի: —Ուրեմն գնանք միասին, եւ կը տամ հարկաւոր հրամանները: Բէկը և կախկաղութը դուրս գնացին վրանից: Նրանց հետեւեցին երկու զինուորներ միայն: Հանապարհին բէկը ասաց սրբազանին: —Երեւում է, որ այդ տէր Աւետիքը շատ ճարպիկ մարդ է: —Եւ քաջ է, պատասխանեց կախկաղութը: (Կը շարունակվի)

\*) Գիւրկայ բերդերի աւերակները և մինչև այսօր սարապի են գցում ծանապարհորդի վրա. նրանց լիակատար նկարագրութիւնը լոյս կը տեսնի մեր Սիւնեաց աշխարհի ուղեգրութիւնների մէջ: